*թիւին մէջ յիշատակուած համանուն եկեղեցին. Թէեւ իր մասին եղած պատմական տեղեկութեանց նմանութիւնը նոյնութեան կասկածն ալ կուտայ։ Նախապէս կ'պատկանէր Օրթոտոքս Ղպտիներուն, և Հայոց տրուեցաւ Գրիգոր Վրկայասէրի այցելութեան ատեն, երբ Տուրայի վիճակն ամբողջ Հայոց շնորհուեցաւ։ Մեր նախնիք փլցուցին փոքրիկ եկեղեցին և կառուցին ընդարձակ և բազմազմբէթ տաճար մը, վրան ևս զանգակատուն աշտարակ մը, որուն դուռը ներսէն էր. պարփակով պատեցին եկեղեցւոյ շրջապատը, որուն մէջ աղբիւր մը և ջրաղացք մը ևս կային. իսկ չորս կողմը ծածկուած էր նարինջենիի և արմաւենիի անտառով։*

## 8. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ.

*Տուրայի Ս. Գէորգ Եկեղեցիին մօտ էր այս Եկեղեցին, որ հաւանաբար նուիրուած էր Ս. Լուսաւորչի անուան։*

## 9. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ.

*Մըսրայ ճամբուն վրայ, Ջիմուղին և հողաթումբերուն միջեւ։ Իրապէս երեք տաճարներէ կ'բաղկանար ան, մին՝ Ղպտիներու, միւսը՝ Ասորիներու, երրորդը՝ Հայոց։ ԺԵ. դարու Ա. կիսուն դեռ գոյութիւն ունէր։*